# ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒԹՅՈՒՆ

2004 թ. ապրիլին Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի սրբապատ կոնդակով

**«Ս. Ներսես Շնորհալի»** շքանշանով պարգևատրվել է.
Գևորգ Մանուկյան (Կանադայի հայոց թեմ)

**Օրհնության գիր** է տրվել.
Սերժիկ Կոծինյան (Նոր Նախիջևանի և Ռուսաստանի հայոց թեմ)
Պողոս Պետրոսյան (Արգենտինայի հայոց թեմ)
Սարա Քորնինգի հիշատակին (Կանադայի հայոց թեմ)
ԱՄՆ հայոց Արևելյան թեմի հոգևորականաց համագումարին
ԱՄՆ հայոց Արևելյան թեմի պատգամավորական ժողովին
ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի պատգամավորական ժողովին
ԱՄՆ հայոց Արևմտյան թեմի Տիկնանց Միությանը
Կրոնասեր Տիկնանց Համախմբումին (Լիբանան, Բեյրութ)
Սուրբ Խաչ եկեղեցու ծխական խորհրդին (ԱՄՆ հայոց Արևմտյան թեմ)

**Ավագության** պատիվ է տրվել.
Նարեկ քահանա Իշխանյան (Իրաքի հայոց թեմ)

# ԿԱՐԳԱԼՈՒԾ ԵՆ ՀՌՉԱԿՎԵԼ Տ. ՄԱՇՏՈՑ ԱԲԵՂԱ ԺՈՌՈՅԱՆԸ ԵՎ Տ. ՆԱՐԵԿ ՔԱՀԱՆԱ ԱՀԱՐՈՆՅԱՆԸ

Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական տնօրինությամբ ապրիլի 1-ից կարգալույծ են հռչակված Հոգեշնորհ Տ. Մաշտոց աբեղա Ժոռոյանը՝ հոգևոր ծառայությունն ինքնակամորեն լքելու կանոնազանց ընթացքի համար, և Տ. Նարեկ քահանա Ահարոնյանը՝ կարգալույծ հռչակված Ղազարոս Կյուրեղյանի հերձվածին հարելու կանոնազանց ընթացքի համար:

Այսուհետ նրանք դասվում են աշխարհականների շարքը և կկոչվեն իրենց ավազանի անուններով՝ Մուշեղ Ժոռոյան և Գարիկ Ահարոնյան:

*ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ*
*ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ*